ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱՌԼԵՆ ՄԱՅԻՍԻ

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2023

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ШАХВЕРДЯН АРЛЕН МАИСОВИЧ

ПРОБЛЕМА ЭКОЛОГИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ В КОНТЕКСТЕ СТРАТЕГИЧЕСКОЙ ОЦЕНКИ (НА ПРИМЕРЕ РА)

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02 – “Политические институты и процессы”

АВТОРЕФЕРАТ

ЕРЕВАН 2023

Ատենախոսության թեման հաստատվել է **Երևանի պետական համալսարանում**

Գիտական ղեկավար՝ քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Տիգրան Տոնիկի Քոչարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ալեքսանդր Ալեքսանդրի Մարգարով**
քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ալեքսանդր Ռոբերտի Ավետիսյան**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ Պետական կառավարման ակադեմիա**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023 թ. դեկտեմբերի 19-ին, ժամը 12:00-ին, ԵՊՀ-ում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» 056 մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան 0025, Ալեք Մանուկյան 1:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում: Սեղմագիրն առաքված է 2023 թ. նոյեմբերի 6-ին:

ՀՀ ԲՈԿ-ի 056 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ **Վահրամ Սամվելի Պետրոսյան**

Тема диссертации утверждена в **Ереванском государственном университете**

Научный руководитель: доктор политических наук, профессор **Тигран Тоникович Кочарян**

Официальные оппоненты: доктор политических наук, профессор **Александр Александрович Маргаров**
кандидат политических наук, доцент **Александр Робертович Аветисян**

Ведущая организация: **Академия государственного управления РА**

Защита состоится 19 декабря 2023 г., в 12:00 часов на заседании действующего в ЕГУ РА специализированного совета 056 “Политология и международные отношения” ВАК РА. Адрес: РА, Ереван 0025, ул. Алека Манукяна 1.
С диссертацией можно ознакомиться в библиотеке Саркиса и Мари Измирлянов ЕГУ. Автореферат разослан 6 ноября 2023 г.

Научный секретарь специализированного совета 056 ВАК РА, кандидат исторических наук, доцент **Ваграм Самвелович Петросян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Մարդկային քաղաքակրթության կայուն և անվտանգ զարգացման համատեքստում միջազգային հանրության առջև այսօր ծառացած օրակարգային հարցերից մեկը էկոլոգիական անվտանգության ապահովումն է, որն ունի համամոլորակային ընդգրկում և նշանակություն: Էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրն առավել քան արդիական է՝ հաշվի առնելով անվտանգային միջավայրի արդի փոփոխությունները, նոր մարտահրավերները, ժամանակակից պատերազմների և զինված հակամարտությունների բնույթի փոփոխությունը: Խնդիրն արդիական ու զգայուն է հատկապես հակամարտության գոտիներում, որտեղ բնահամակարգերին հասցված վնասի հետևանքներն հաճախ անդառնալի են: Արդի միջազգային և միջպետական հարաբերություններում, քաղաքական գործընթացներում էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրն ունի զգալի ազդեցություն՝ հաճախ հանդիսանալով քաղաքական հարաբերությունների վերանայման, ճշգրտման, ինչպես նաև ներքաղաքական լարվածությունների առաջացման պատճառ, քաղաքական բնույթի թիրախային ու նպատակային շահարկումների առիթ, ռազմավարական ընդգրկում և անվտանգային նշանակություն ունեցող միջազգային փաստաթղթերի ու պարտավորությունների վերանայման պատճառ, տարածաշրջանային ու միջազգային անվտանգության դինամիկայի և քաղաքական որոշումների կայացման վրա որոշակի ազդեցություն ունեցող գործոն:

Այսօր աշխարհում զգալի նշանակություն է ստացել քաղաքական էկոլոգիան կամ էկոլոգիական քաղաքագիտությունը, որը հայրենական գիտության մեջ լիարժեքորեն ուսումնասիրված չէ: Սույն աշխատությամբ փորձ է արվում նշանավորել այս՝ համեմատաբար նոր և հեռանկարային գիտաճյուղը, նորովի դիտարկել էկոլոգիական անվտանգության ու դրա ապահովման հիմնախնդիրը՝ այն գնահատելով և վերլուծելով քաղաքական, քաղաքագիտական, ռազմավարական, ռազմական ռազմավարական և անվտանգային համատեքստներում, ազգային, տարածաշրջանային և միջազգային չափումներում՝ փորձելով ընդգծել նշված հիմնախնդրի քաղաքագիտական և ռազմավարական խորությունն ու նշանակությունը: Այդ նպատակով հատկապես քաղաքական գիտության գործիքակազմի օգտագործումը հնարավորություն է տալիս առավել խորքային կերպով և ամենավերին՝ ռազմավարական մակարդակում, վերլուծելու էկոլոգիական բազմաշերտ հարցերը: Ըստ էության, էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի դիտարկումն ու գնահատումը քաղաքական գիտության տեսանկյունից հանդիսանում է էկոլոգիական քաղաքագիտության հետազոտությունների ռազմավարական մակարդակը: Այդպիսի դիտարկման և գնահատման շնորհիվ կարելի է հանգել անհրաժեշտ ու կարևոր հետևությունների և մշակել ռազմա-

վարական նոր մոտեցումներ՝ պետական և ռազմական կառավարման, արտաքին ու ներքին արդյունավետ քաղաքականության իրականացման համար:

Էկոլոգիական անվտանգության համատեքստում մեծ նշանակություն են ստացել նաև ռազմական էկոլոգիայի գիտաճյուղը և ժամանակակից պատերազմավարության բնութագրիչ գիծ դարձած էկոլոգիական բնույթի հանցագործությունները՝ հակառակորդի բնահամակարգի միտումնավոր ոչնչացումը (էկոցիդը կամ բնաոչնչացումը)՝ որպես հետազոտելի ուրույն երևույթ: Վերջինս այսօր համարվում է միջազգայնորեն դատարպարտելի ռազմական հանցագործություն, և սկսվել է դրա քրեականացման ու իրավական գնահատման միջազգային գործընթաց: Այս համատեքստում ատենախոսության մեջ փորձ է արված գնահատել և վերլուծել էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի զգայունությունն ու կարևորությունը մասնավորապես Ղարաբաղյան հակամարտության և 2020 թ. 44-օրյա պատերազմի հետևանքների համատեքստում՝ ընդգծելով և հիմնավորելով հակառակորդի կողմից Հայաստանի և Արցախի բնահամակարգերին հասցված միտումնավոր վնասի փաստի թիրախային ու նպատակային օգտագործման քաղաքական, դիվանագիտական, իրավական նոր հնարավորությունները՝ որպես հայանպաստ և արդյունավետ գործիք Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում, Հայաստան-Ադրբեջան ներկա և հետագա հարաբերություններում, ինչպես նաև Ադրբեջանի կողմից ՀՀ-ի նկատմամբ հնարավոր նոր ագրեսիայի կանխարգելման առումով: Հետևաբար, աշխատությունն առնչվում է ոչ միայն էկոլոգիական անվտանգության հիմնախնդրին ՀՀ օրինակով, այլև Հայաստանի և Արցախի կայուն ու անվտանգ զարգացման հեռանկարին:

Ատենախոսության թեմայի գիտական մշակվածության աստիճանը: Աշխատանքի ընթացքում օգտագործվել են այն հեղինակների աշխատությունները, որոնցում էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրը դիտարկվել և գնահատվել է քաղաքագիտական, քաղաքական տեսանկյուններից՝ անդրադառնալով նաև էկոլոգիական անվտանգության խնդիրների և հակամարտությունների միջև պատճառահետևանքային կապերին: Ըստ այդմ, սույն աշխատության թեման հետազոտության նոր ու լայն տիրույթ է բաց անում հայրենական գիտության հետագա հետազոտությունների համար, հատկապես՝ հակամարտությունների հետևանքով բնությանը հասցված վնասի և էկոլոգիական խնդիրներից առաջացած քաղաքական հետևանքների մասով:

Արտասահմանյան հեղինակներ՝ Ու. Ռոզենբաումի[1], Թ. Թերիֆի (և ուրիշներ)[2], Դ. Մարտինի (և ուրիշներ)[3], Բ. Ալենբիի[4], Ս. Պյաստոլովի[5], Վ. Պիտուլկոյի

[1] Rosenbaum W. A., Environmental Politics and Policy. Tenth Edition, “SAGE”, 2017, 408 p.

[2] Terriff T., Croft S., James L., Morgan P., Security Studies Today, York House Typographic Ltd, London, 2002, 240 p.

և Վ. Կուլիբաբայի[6], Գ. Մաթիաշվիլիի[7], Մ. Գալպերինի[8] և այլոց, ինչպես նաև հայ հեղինակներ՝ Ս. Գևորգյանի[9], Դ. Բաբայանի[10], Ս. Պապյանի[11] և այլ հեղինակների աշխատություններում և գիտական հոդվածներում առաջ է քաշվել էկոլոգիական հիմնախնդրին, մարդ-բնություն հարաբերությանը, էկոլոգիական քաղաքականությանն ու անվտանգությանն առնչվող հարցերի լայն շրջանակ, սկսած՝ շրջակա միջավայրի վրա ռազմական գործողությունների ու հակամարտությունների առաջացրած փոփոխություններից մինչև էկոլոգիական խնդիրները՝ որպես քաղաքականության հարցեր: Նշված հեղինակների աշխատություններում շրջակա միջավայրը դիտարկվում է որպես անվտանգային տիրույթ և հիմնավորվում է էկոլոգիական անվտանգության զգալի կարևորությունը մեր օրերում: Մասնավորապես՝ Ֆրենկ Թոնի կողմից կիրառության մեջ է մտել «քաղաքական էկոլոգիա» տերմինը, որը ներկայումս կիրառվում է նաև որպես «էկոլոգիական քաղաքագիտություն» և «շրջակա միջավայրի քաղաքագիտություն և քաղաքականություն»[12]: Մասնագիտական տիրույթում մեծ համարում ունեն, օրինակ, ԱՄՆ Վիսկոնսինի համալսարանի պրոֆեսոր, ք.գ.դ., շրջակա

---

[3] Мартин Д., Хенрикс Т., Пирк-Велкавр А., Фолкери А., Ярошинска Д., Чагой П., Хугевен И., Окружающая среда Европы: Состояние и перспективы 2010. Обобщающий доклад. Европейское агентство по окружающей среде, 222 с.

[4] Allenby B., “Environmental Security: Concept and Implementation”. “International Political Science Review”, 2000, Vol. 21, №. 1, 5-21.

[5] Пястолов С., “Политическая экология: Новая парадигма на основе старой идеи”, Современная экономическая теория, 2015, Т. 13, № 4, сс. 17-30.

[6] Питулько В., Кулибаба В., Реновация природных систем и ликвидация объектов прошлого экологического ущерба. М., 2023, 497 с.

[7] Matiashvili G., Berestova-Gadilia K., Pkhikidze N., Environmental crimes in a transnational context. Topical issues of international environmental disputes as a risk of threat to the world legal order. 2022, 150 p.

[8] Гальперин М., Экологические основы природопользование. 2-е изд. М., 2023, 256 с.

[9] Գևորգյան Ս., Պետրոսյան Ռ., Գևորգյան Ա., «Էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրները ՀՀ-ում»: «Ամբերդ» մատենաշար): Եր., 2014, 50 էջ:

[10] Бабаян Д., “Гидрополитика Азербайджано-карабахского конфликта”. Глава VI, “Возможность взаимовыгодного сотрудничества между Арцахом и Азербайджаном в будущем”. Москва-Ереван, 2019, “Defacto”, 152+16 с.; Бабаян Д., “Проблема водной безопасности Республики Армения и Арцаха в контексте урегулирования Нагорно-Карабахского конфликта”: «Հայաստանի ազատագրված տարածքը և Արցախի հիմնախնդիրը»: Եր., 2006, էջեր 166-182; Бабаян Д., “Проблема воды в контексте урегулирования Нагорно-Карабахского конфликта”. Степанакерт, 2007, 144 с.

[11] Պապյան Ս., ՀՀ բնապահպանական անվտանգության ռազմավարությունը: ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2007, հմ. 2–3, էջեր 82-89:

[12] Thone F., “Nature Rambling: We Fight for Grass”, *The Science Newsletter,* 1935, Jan., Vol. 27 No. 717, pp 5-14.

միջավայրի քաղաքագիտական գնահատման ոլորտի մասնագետ Մայքլ Քրաֆթի՝ էկոլոգիայի և էկոլոգիական քաղաքագիտության վերաբերյալ աշխատությունները, որոնցում նա անդրադառնում է այն համընդհանուր վտանգներին և սպառնալիքներին, որոնք այսօր առկա են էկոլոգիական (նաև՝ շրջակա միջավայրի) տիրույթում և օրակարգային հարցեր են հանդիսանում աշխարհի շատ պետությունների համար՝ ստիպելով վերանայել իրենց քաղաքականությունն ու ռազմավարությունը, համապատասխանեցնել դրանք առկա իրողություններին և մարտահրավերներին[13]: Հակամարտությունների և էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրների միջև կապի վերաբերյալ ուշագրավ են Ռայմո Վեյրինենի հայացքները: Նա գտնում էր, որ էկոլոգիական անվտանգության սպառնալիքները հաճախ դուրս են գալիս պետությունների սահմաններից՝ վնասելով ամբողջ տարածաշրջանին, այդպիսով նաև հնարավոր նոր բախումների պատճառ դառնում, իսկ զարգացող պետությունների միջև բնական պաշարների համար պայքարը ապագայում ավելի է սրանալու[14]: Հակամարտությունների պատճառ կամ հետևանք հանդիսացող շրջակա միջավայրի հետազոտությունների հարցերում արժանահիշատակ են Սայմոն Մեյսոնի, Կուրտ Սփիլմանի, Թոմաս Հոմեր-Դիքսոնի, Ռոբերտ Կապլանի հետազոտությունները[15]: Զինված հակամարտությունը և շրջակա միջավայրի փոփոխությունը, անվտանգությունը և շրջակա միջավայրը, կլիմայական փոփոխությունը և անվտանգությունն այն հիմնական ուղղություններն են, որոնք ուսումնասիրված են Փոլ Ուիլյամսի խմբագրմամբ հրատարակված «Security Studies» գրքում[16]:

Արցախի և Հայաստանի էկոլոգիական անվտանգության և էկոլոգիական քաղաքականության, ՀՀ-ի և ԱդրՀ-ի միջև հարաբերություններում էկոլոգիական անվտանգության հարցերի քաղաքական զարգացումների ու հետևանքների վերաբերյալ հայրենական մասնագիտական հետազոտությունները սակավ են, այս տիրույթը որոշակիորեն բաց է: Օրինակ՝ առայժմ չկա Ղարաբաղյան հակամարտության՝ քաղաքական գիտության տեսանկյունից արված համալիր, համապարփակ ուսումնասիրություն և վերլուծություն հատկապես այն էկոլոգիական խնդիրների վերաբերյալ, որոնք առաջացել են, օրինակ, 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո և կամ կարող են դեռ առաջանալ Ղարաբաղյան հակամարտության հետևանքով, ինչպես նաև այն հնարավորությունները, որոնք տալիս են նշված հիմնախնդրի ուսումնասիրությունն ու շրջանառումը՝ Ղարա-

---

[13] Kraft M. E., Environmental Policy and Politics. Seventh Edition, “Routledge”, 2018, 402 p.

[14] Vayrynen R., “Environmental Security and Conflicts: Concepts and Policies”. *International Studies*, 1998, Vol. 35, № 1, pp. 3-21.

[15] Мейсон С., Спиллманн К., “Конфликты, связанные с окружающей средой и урегулирование региональных конфликтов”, 30 с., http://www.cawater-info.net/bk/water_law/pdf/mason_spillmann.pdf.

[16] Williams P., Security Studies: An Introduction, “Taylor & Francis Ltd”, 2018, 3rd ed., 666 p.

բաղյան հակամարտության կարգավորման համար, հատկապես՝ բանակցային գործընթացում հայանպաստ դիրքերի զբաղեցման տեսանկյունից:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է վեր հանել էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի նշանակությունն ու ընդգծել կարևորությունը քաղաքագիտական և ռազմավարական առումներով, ներպետական ու միջպետական քաղաքական-անվտանգային գործընթացներում և ժամանակակից պատերազմներում, միևնույն ժամանակ՝ դիտարկելով բնահամակարգի միտումնավոր ոչնչացման դատապարտման միջազգային գործընթացների արդյունքները՝ որպես Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում հակառակորդի նկատմամբ գերակայություն ապահովող բանակցային գործիք և ՀՀ անվտանգային շահերի ապահովման նոր ու արդյունավետ ռազմավարական ուղղություն:

Առաջադրված նպատակին հասնելու համար առանձնացվել են հետևյալ խնդիրները՝

- վերլուծել «էկոլոգիա» գիտաճյուղի, «էկոլոգիական անվտանգության» հասկացության արդի զարգացումները,
- վերհանել մարդու կողմից բնահամակարգերի միտումնավոր վնասումը՝ էկոցիդը, որպես էկոլոգիական անվտանգության կարևոր սպառնալիք՝ դիտարկելով այն ժամանակակից պատերազմների բնութագրիչ գծերի և միջազգայնորեն դատապարտելի հանցագործությունների տիրույթներում,
- պարզաբանել և հետազոտական հենքով գնահատել պատերազմների կործանարար ազդեցությունը բնության վրա,
- ցույց տալ էկոլոգիական անվտանգության քաղաքական-անվտանգային, քաղաքագիտական գնահատման խնդրի կարևորությունը ռազմավարական մակարդակում, ներպետական և միջպետական քաղաքական գործընթացների տիրույթներում, Ղարաբաղյան հակամարտության և Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների համատեքստներում:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը էկոլոգիական անվտանգության ինստիտուտն է ու ենթահամակարգը, հետազոտության առարկան՝ էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրը Ղարաբաղյան հակամարտության և միջազգային գործընթացներում, Հայաստան-Ադրբեջան հարաբերություններում:

Ատենախոսության տեսական հիմքը: Հետազոտության տեսական հիմքը կազմում են քաղաքական էկոլոգիայի կամ էկոլոգիական քաղաքագիտության (“Political Ecology”, “Environmental Politics”), էկոլոգիական անվտանգության (“Environmental (Ecological) Security”) և շրջակա միջավայրի պահպանության մասին գիտության (“Environmental Science”) տեսական դրույթները, ինչպես նաև ազգային և միջազգային հայեցակարգային փաստաթղթերը, այդ թվում՝ «ՀՀ Սահմանադրությունը» (առաջին և փոփոխված տարբերակները), «ՀՀ ազգային

անվտանգության ռազմավարությունը» (առաջին և վերանայված նոր տարբերակը), ՀՀ Կառավարության 2021-2026 թթ. ծրագիրը, «ՀՀ ռազմական դոկտրինը», ՀՀ բնապահպանության ոլորտը կարգավորող օրենքները, ՀՀ բնապահպանության ոլորտը կարգավորող ՀՀ կառավարության որոշումները, Արցախի Հանրապետության Սահմանադրությունը, բնապահպանական ոլորտը կարգավորող միջազգային կոնվենցիաները, համաձայնագրերը, ՄԱԿ-ի, ՆԱՏՕ-ի, Առողջապահության համաշխարհային կազմակերպության, Բնության պահպանության միջազգային միության, Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի, տեղական և միջազգային բնապահպանական այլ կազմակերպությունների զեկույցները, բնապահպանության ոլորտը կարգավորող օրենսդրական ակտերը, բնապահպանական գիտական հոդվածները, տեղական և արտասահմանյան պետական պաշտոնյաների ու բնապահպանական ոլորտի գործիչների ելույթներն ու զեկուցումները, հայրենական և արտասահմանյան ԶԼՄ-ներում առկա վերլուծություններն ու հոդվածները, սոցիալական մեդիան:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը: Ատենախոսության մեթոդաբանական հիմքում ընկած են համընդհանուր, միջգիտակարգային մեթոդներ: Մասնավորապես՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի մեթոդները: Կիրառվել են նաև համալիր և համակարգային ուսումնասիրության մեթոդը, համեմատական վերլուծությունը, քննադատական մոտեցումը, իրադարձությունների վերլուծության և մոդելավորման մեթոդը: Հետազոտության հիմքում դրվել են օբյեկտիվության, համակարգայնության, կոնկրետության, անաչառության, բազմակարծության, պատմականության, բնաճանաչողականության ակադեմիական ճշգրտության սկզբունքները:

Ատենախոսության գիտավարկածը: Արդի քաղաքական գործընթացներում, ազգային և միջազգային չափումներում, ժամանակակից պատերազմներում և էթնոքաղաքական բնույթի զինված հակամարտություններում մեծացել են էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի նշանակությունն ու ազդեցությունը՝ պետություններին ստիպելով վերանայել իրենց քաղաքականությունը, ռազմավարությունը և մշակել էկոլոգիական անվտանգության ապահովման նոր մոտեցումներ ու մեխանիզմներ: Մեծացել է նաև էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի նշանակությունը բնաոչնչացման դատապարտմանն ու քրեականացմանն ուղղված միջազգային իրավական գործընթացներում, ինչը նոր հնարավորություններ է ստեղծում ՀՀ անվտանգային շահերի ապահովման համատեքստում:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթը կարելի է ներկայացնել հետևյալ ձևակերպումներով՝

- Քաղաքագիտական և ռազմավարական գնահատումներով վերլուծվել է էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրը միջազգային քաղաքական գործընթացներում և ՀՀ անվտանգային շահերի տեսանկյունից:
- Հաշվի առնելով ժամանակակից պատերազմների բնույթի փոփոխությունը և խաղաղ ու պատերազմական ժամանակ հակառակորդի բնահամակարգը որպես ոչնչացման ռազմավարական թիրախ դիտարկելու և օգտագործելու միտումների ընդլայնումն ու զարգացումը՝ առաջին անգամ առաջ է քաշվել ռազմական ռազմավարական տեսանկյունից էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի գնահատման և էկոլոգիական բովանդակությամբ պատերազմի հնարավոր բնույթի որոշման մեխանիզմ՝ օգտագործելով պատերազմների բնույթի կանխատեսման և որոշման սոցիալ-քաղաքական ու ռազմավարական բնույթի տարրերը:
- Իմաստավորվել և մեկնաբանվել են «էկոլոգիա» և «էկոլոգիական անվտանգություն» հասկացությունների զարգացումն ու ընդլայնումը արդի քաղաքական, անվտանգային գործընթացներում և հասարակական ու միջազգային ընկալումներում: «էկոլոգիական անվտանգության» սահմանման մեջ արվել է հեղինակային խմբագրում և ներկայացվել առաջարկության տեսքով:
- Գիտական շրջանառության մեջ են դրվել էկոլոգիայի և էկոլոգիական անվտանգության զարգացմանը վերաբերող երկու նոր տերմիններ՝ «սոցիալացանցային էկոլոգիա» և «սոցիալացանցային էկոլոգիական անվտանգություն»:
- Ղարաբաղյան հակամարտության կարգավորման համատեքստում էկոլոգիական անվտանգության ապահովման հիմնախնդիրը դիտարկվել է՝ որպես Հայաստանի և Արցախի պետական արտաքին քաղաքական, ռազմական և տեղեկատվական անվտանգությունների ապահովման արդյունավետ գործիք:
- Շրջանառության մեջ է դրվել գաղափարը, որ Ադրբեջանը ոչ միայն Արցախի անվտանգությանն է սպառնում քաղաքական, ռազմական և հումանիտար առումներով, այլև համամարդկային սպառնալիք է էկոլոգիական առումով՝ վտանգելով ու վնասելով ինչպես Արցախի, այնպես էլ Կովկասյան տարածաշրջանի կենսաբազմազանությանը, որը միջազգային բնապահպանական կառույցների կողմից համարվում է բացառիկ, էնդեմիկ տեսակներով հարուստ կենսատարածք:
- Էկոցիդի՝ որպես մարդկության դեմ ուղղված հանցագործության, միջազգայնորեն դատապարման ու իրավական գնահատման արդի միջազգային գործընթացների գնահատմամբ՝ առաջ են քաշվել և ներկայացվել Հայաստանի և Արցախի համար շահեկան հնարավորությունները՝ Ադրբեջանին միջազգային ատյաններում, մասնավորապես՝ ՄԱԿ-ի միջազգային դատարանում իրավական պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ՝ ներկայացնելով 2020 թ.

44-օրյա պատերազմում Ադրբեջանի կողմից սպիտակ ֆոսֆորի կիրառման փաստը ոչ միայն որպես ՄԱԿ-ի Կանոնադրությամբ և միջազգային պայմանագրերով արգելված զինատեսակի օգտագործում, այլև մեր բնահամակարգին հասցված միտումնավոր վնաս, ինչը 21-րդ դարում միջազգայնորեն դատապարտելի երևույթ հանդիսացող էկոցիդի ցայտուն և փաստարկված օրինակ է:

- Ղարաբաղյան հակամարտության քաղաքագիտական գնահատման համատեքստում Հարավկովկասյան էկոհամակարգի մաս կազմող Արցախի էնդեմիկ կենսաբազմազանության ապահովումը և պահպանումը առաջարկվել է իրականացնել Արցախին, մասնավորապես՝ նախկին ԼՂԻՄ տարածքին, միջազգային մակարդակով հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակի տրամադրմամբ ու ամրագրմամբ՝ անկախ Արցախի քաղաքական և իրավական ներկա ու ապագա կարգավիճակից:

Ատենախոսության տեսակիրառական նշանակությունը: Ատենախոսության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ բացահայտվում և կարևորվում է էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի քաղաքագիտական գնահատման դերն ու նշանակությունը քաղաքական գործընթացներում, պետական կառավարման տեսություններում և համակարգում, հասարակական զարգացումներում, ձևակերպվում է Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման հնարավոր նոր մեխանիզմի հնարավորությունը: Բացի այդ, ատենախոսության հեղինակի կողմից գիտական շրջանառության մեջ երկու նոր տերմինների առաջքաշման առաջարկը, հնարավոր է, գիտական նոր ուսումնասիրությունների և գիտաճյուղերի սկիզբ դառնա:

Ատենախոսության տեսակիրառական նշանակությունը կայանում է նաև նրանում, որ ատենախոսության մշակման արդյունքում ստացված գիտահետազոտական նյութը, մասնավորապես՝ «Էկոլոգիական անվտանգությունը՝ պետության ազգային անվտանգության բաղադրիչ» վերնագրով ընդարձակ դասախոսությունը ներառված է ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի կրթական ծրագրերում, մասնավորապես՝ «Պետության ռազմական անվտանգություն» գերատեսչական ակադեմիական վերապատրաստման դասընթացում (2019 թ.-ից ի վեր), «Պետական և ռազմական կառավարում» մասնագիտությամբ մագիստրոսական կրթական ծրագրում (2021 թ.-ից ի վեր), «Պետության անվտանգության ապահովման հիմունքներ» միջգերատեսչական վերապատրաստման դասընթացում (2023 թ.-ից ի վեր): Դասախոսության նյութն օգտագործվում է նաև ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի Ռազմական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի կողմից գիտակրթական ծրագրերի մշակման ժամանակ: Ատենախոսության մեջ վերհանված մի շարք խնդիրների վերաբերյալ առանձին հրապարակումներ են հասցեագրվել ՀՀ ԱԳՆ-ին, ՀՀ Շրջակա միջավայրի նախարարությանը, ՀՀ անվտանգության խորհրդին, ՀՀ և Արցախի Մարդու իրավունքների պաշտպաններին և այլոց: Ատենախոսությունում

ներառված հիմնական դրույթներն ու տեսակետները ներդրված են նաև ատենախոսության հեղինակի «Ապրելու իրավունք» (2012 թ.) և «Լռության գինը» (2014 թ.) գրքերում:

Ատենախոսության գործնական նշանակության տեսանկյունից ատենախոսությունը կարող է հայկական պետական, քաղաքական ղեկավարության համար կիրառելի նյութ դառնալ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում, նպաստել Հայաստանում և Արցախում էկոլոգիական խնդիրների լուծման առավել համալիր և համակողմանի ուսումնասիրմանը՝ էկոլոգիական խնդիրները դիտարկելով ազգային անվտանգության ապահովման համատեքստում: Ատենախոսությունը կարող է օգտակար նյութ լինել նաև ՀՀ պետական կառավարման քաղաքականության մշակման և գործադրման դերակատարների համար, ինչպես նաև նոր հետազոտությունների խթան հանդիսանալ բնապահպանական կառույցների, առանձին բնապահպանների համար: Ատենախոսության արդյունքները և, հատկապես՝ առաջ քաշված նոր մոտեցումները կարող են օգտագործվել հետազոտողների և ասպիրանտների կողմից՝ իրենց գիտական աշխատանքները կատարելիս: Ատենախոսության նյութերը կարող են օգտագործվել նաև բուհական համակարգում՝ ՀՀ ազգային անվտանգության համակարգի և էկոլոգիական անվտանգության ոլորտի զարգացման նպատակով, ինչպես նաև Ղարաբաղյան խնդրի կարգավորման առանձնահատկությունների հաշվառմամբ ուսումնական ու մեթոդական նոր ձեռնարկների ու հրատարակությունների համար:

Ատենախոսության արդյունքների հավաստիությունը: Արդյունքների հավաստիության հիմք են հանդիսանում տարբեր պետությունների փորձը՝ էկոլոգիական անվտանգության խնդիրները քաղաքական նպատակներով արդյունավետորեն օգտագործելու հարցում, ինչպես նաև արդի զարգացումները, որոնք գործնականում փաստում և հիմնավորում են ատենախոսության մեջ արված կանխատեսումները, գնահատումներն ու վերլուծությունները:

Հետազոտության տվյալների փորձաքննությունը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական գիտակարգային դրույթներն ու հետազոտական արդյունքները ներկայացվել, քննարկվել և զեկուցվել են ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի Գիտական խորհրդի քննարկումներում (2018 թ.), ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ում 2021-2023 թթ. անցկացված կլոր սեղան-քննարկումների, գիտաժողովների և ուսումնամեթոդական վարժանքների ժամանակ, ՀՀ պետական կառավարման ակադեմիայում (2019 թ. մայիսի 16), ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ում անցկացված միջազգային փորձագիտական, գիտակիրառական քննարկման ժամանակ՝ ԱՄՆ պաշտպանության դեպարտամենտի «Մերձավոր Արևելք-Հարավային Ասիա» ռազմավարական հետազոտությունների կենտրոնի պատվիրակության մասնակցությամբ (2022 թ. ապրիլի 11-14-ը), Երևանի «Գլաձոր» համալսարանում (2023 թ. մայիսի 22):

Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակվել են 9 գիտական հոդվածների տեսքով:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 177 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ նկարագրված են ատենախոսության թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, նպատակը և խնդիրները, հետազոտության օբյեկտը և առարկան, հետազոտության մեթոդները, գիտավարկածը, աշխատանքի տեսական և կիրառական նշանակությունը և այլն:

Առաջին գլխում՝ «Էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրը անվտանգային և քաղաքագիտական զարգացումների համատեքստում» վերտառությամբ, նկարագրված են մի շարք գիտությունների «էկոլոգիացման», «էկոլոգիա» գիտաճյուղի և «էկոլոգիական անվտանգություն» հասկացության՝ որպես ազգային անվտանգության կարևոր բաղադրիչի, իմաստաբանական և բովանդակային ընդլայնումները, նորովի իմաստավորումն ու գնահատումը էկոլոգիական արդի խնդիրների համատեքստում:

Առաջին ենթագլխում՝ վերնագրված **«Էկոլոգիական անվտանգության արդի զարգացումները»**, ներկայացվում են էկոլոգիական խնդիրների և անվտանգության ուրույն փոխկապվածությունն ու փոխհարաբերությունները՝ մարդկային կենսագործունեության զարգացման համատեքստում, վերլուծվում է ռազմական էկոլոգիայի դերն ու նշանակությունը ժամանակակից պատերազմավարության համատեքստում: Միաժամանակ, հաշվի առնելով «էկոլոգիա» գիտաճյուղի ընդլայնումն ու դրա նշանակության տարածումը մարդկային կենսագործունեության բազմաթիվ տիրույթներում՝ առաջարկվում է շրջանառության մեջ դնել էկոլոգիական անվտանգության հետ կապված երկու նոր տերմին՝ «Սոցիալացանցային էկոլոգիա» (անգլ.՝ “Social Network Ecology”, ռուս.՝ “Социально-сетевая экология”) և «Սոցիալացանցային էկոլոգիական անվտանգություն» (անգլ.՝ “Social Network Ecological Security”, ռուս.՝ “Социально-сетевая экологическая безопасность”):

Երկրորդ ենթագլխում՝ **«Էկոլոգիական քաղաքագիտություն. Էկոլոգիական անվտանգության դիտարկումը քաղաքագիտական տեսանկյունից»** վերնագրով, վերլուծվում են էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի՝ քաղաքագիտության տեսանկյունից դիտարկման ու գնահատման առանձնահատկությունները, առավելություններն ու հետազոտական նոր հնարավորությունները՝

ընդգծելով հայրենական գիտության մեջ էկոլոգիական քաղաքագիտության՝ որպես արդիական ու կարևոր գիտաճյուղի զարգացման անհրաժեշտությունը: Հանգամանորեն ներկայացվում են էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի ռազմավարական գնահատման մեխանիզմը: Անդրադարձ է կատարվում նաև էկոլոգիական հիմնախնդրի կարևորմանը միջազգային քաղաքական տարբեր հարթակներում և հայեցակարգային ու ռազմավարական նշանակության փաստաթղթերում: Էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրը ներկայացվում է արտաքին ու ներքին քաղաքական տիրույթներում՝ պետությունների կողմից վարվող քաղաքականության վերահիմաստավորման կամ փոփոխման համատեքստում:

Երրորդ ենթագլխում՝ **«Էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրը՝ որպես հակամարտությունների պատճառ կամ հետևանք»** վերնագրով, հետազոտվել են այն պատճառները, որոնցից հաճախ ծագում են էկոլոգիական անվտանգության խնդիրները, բերվում են տարբեր երկրների միջև հակամարտությունների օրինակներ, վերլուծվում են բնական ռեսուրսների, այդ թվում՝ ջրային պաշարների սղությամբ պայմանավորված ազգությունների և պետությունների միջև ընդդիմապայքարի օրինակներ: Վերլուծվում են էկոլոգիական անվտանգության խնդիրներից ծագած հակամարտությունների հետևանքները: Ներկայացված է էկոլոգիական բնույթի հակամարտությունների տիպաբանությունը:

Չորրորդ ենթագլխում՝ վերնագրված **«Պատերազմի կործանարար ազդեցությունը բնության վրա և հակառակորդի բնահամակարգը՝ որպես պատերազմի թիրախ. էկոցիդ»**, նկարագրված են պատերազմի ժամանակ հակառակորդի բնահամակարգը որպես թիրախ դիտարկելու միտումները և այն միտումնավոր կերպով վնասելու բազմաթիվ փաստեր, ինչպես նաև մի շարք պատերազմների ազդեցությունը էկոհամակարգերի վրա: Հանգամանորեն նկարագրված է հակառակորդի բնահամակարգի միտումնավոր ոչնչացումը՝ բնաոչնչացումը կամ էկոցիդը, որը դիտարկված է նաև Արցախյան պատերազմների համատեքստում:

Երկրորդ գլխում՝ «Էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրը Ղարաբաղյան հակամարտության համատեքստում և Հայաստան-Ադրբեջան հարաբերություններում» վերտառությամբ, ներկայացված է Ղարաբաղյան հակամարտության ընթացքում էկոլոգիական մի շարք խնդիրների ազդեցությունը, նշանակությունը, և որպես քաղաքական շահարկման առարկա, դրանց միտումնավոր օգտագործումը հակառակորդի կողմից: Հետազոտված, վերլուծված և ներկայացված է պատերազմների ժամանակ միտումնավոր բնաոչնչացման երևույթի դատապարտման և այն քրեորեն պատժելի հանցագործություն ընդունելու միջազգային արդի գործընթացը և այդ համատեքստում հայկական կողմի համար բարենպաստ դիրքերի զբաղեցման հնարավորությունը:

Առաջին՝ **«Էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրը՝ Ղարաբաղյան հակամարտության տեղեկատվական-քարոզչական պայքարում»** վերնագրով ենթագլխում հանգամանորեն ներկայացված են Ղարաբաղյան հակամարտության ընթացքում Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանի և Արցախի դեմ էկոլոգիական անվտանգության խնդիրների՝ միջազգային հարթակներում շահարկումներն ու քաղաքական նպատակներով օգտագործումը (գետերի, ջրամբարների, Մեծամորի ատոմակայանի, Սևանա լճի, հանքավայրերի օգտագործման, մետալուրգիական գործարանի շահագործման և այլ խնդիրներ):

Երկրորդ ենթագլխում՝ **«44-օրյա պատերազմի ժամանակ Արցախում կատարված էկոցիդի վերլուծությունը»** վերնագրով, վերլուծված և հանգամանորեն ու մանրամասն կերպով նկարագրված են 44-օրյա պատերազմի ժամանակ Արցախում իրականացված էկոցիդի ժամանագրությունը, փաստագրական տվյալները, իրականացված հանցագործության վերաբերյալ հայկական կողմի իրականացրած աշխատանքն ու անելիքները:

Երրորդ՝ **«Էկոցիդի միջազգային դատապարտման գործընթացի նշանակությունն ու հնարավոր ազդեցությունը Ղարաբաղյան հիմնախնդրի և ՀՀ անվտանգային շահերի վրա»** ենթագլխում, հետազոտված են բնաոչնչացումը կամ էկոցիդը, դրա դատապարտման և քրեորեն պատժելի հանցագործություն ճանաչելու միջազգային իրավական գործընթացի հնարավորություններն ու ընթացքը, հետագա զարգացման միտումները: Հանգամանորեն նկարագրված և մշակված են էկոցիդը՝ քրեորեն դատապարտելի ու պատժելի հանցագործություն ճանաչելու դեպքում, հայկական դիրքերի ամրապնդմանն ուղղված տեսանելի բարենպաստ հնարավորությունները՝ Ղարաբաղյան հակամարտության բանակցային գործընթացում և Հայաստան-Ադրբեջան հետագա հարաբերություններում՝ ՀՀ անվտանգային շահերի ապահովման համատեքստում:

Եզրակացության մեջ ամփոփված են հետազոտության հիմնական արդյունքները, որոնցից հարկ է առանձնացնել հետևյալը.

1. Մոլորակի էկոլոգիական ընդհանուր վիճակը շարունակում է գնալով վատթարանալ: Դրա հիմնական պատճառներն են արագընթաց կերպով նվազող բնական ռեսուրսներն ու դրանց մեծացող պահանջը, հասարակություններում էկոլոգիական կրթության ցածր մակարդակը, էկոլոգիական հսկողության նվազ արդյունավետությամբ օգտագործվող մեխանիզմները, արդյունաբերական ձեռնարկությունների կառավարման անկատարելիությունը և այլն: Այս համատեքստում օրախնդիր հարց է դառնում միջազգային մի շարք բնապահպանական կոնվենցիաների և քաղաքական, տնտեսական ու ռազմավարական նշանակության բնապահպանական պայմանագրերի, համաձայնագրերի վերանայումն ու վերահմաստավորումը:

2. «Էկոլոգիա» գիտաճյուղն ու էկոլոգիական անվտանգությունը՝ որպես ազգային անվտանգության բաղադրիչ, այսօր ուրույն զարգացում են ապրում և

արդի աշխարհում նկատելի է որոշ գիտությունների «էկոլոգիացում»: «Էկոլոգիա» գիտաճյուղն ավելի հաճախ է դիտարկվում շրջակա միջավայրի, միջավայրագիտության, մարդ-բնություն և մարդ-մարդ հարաբերությունների տիրույթներում, իսկ էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրն ու մասնավորապես՝ միտումնավոր բնաոչնչացումը (էկոցիդը) նորովի են իմաստավորվում ու դիտարկվում ժամանակակից պատերազմների, մասնավորապես՝ հիբրիդային և անհամաչափ բնույթի պատերազմավարության, ինչպես նաև միջազգային հարաբերությունների ու քաղաքական արդի գործընթացների համատեքստներում: Ըստ այդմ՝ անհրաժեշտություն է առաջացել էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրը դիտարկել համալիր և խորքային կերպով, համակողմանիորեն, ռազմավարական, ռազմական ռազմավարական և քաղաքագիտական մակարդակներում՝ արդի մարտահրավերների ու սպառնալիքների, քաղաքական գործընթացների, անվտանգային խնդիրների զարգացման դինամիկայի, ժամանակակից պատերազմների և զինված հակամարտությունների բնույթի հաշվառմամբ:

3. Ներկայումս լայն թափ է ստանում էկոլոգիական քաղաքագիտության զարգացումը՝ ընդգրկելով քաղաքական ինստիտուտների և գործընթացների գնահատման նոր մեխանիզմներ ու գործիքակազմ: Էապես մեծացել է նաև էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի գնահատումն ու դիտարկումը ռազմավարական տեսանկյունից, ռազմավարական և ռազմական ռազմավարական մակարդակի հետազոտությունների տիրույթում: Այս համատեքստում անհրաժեշտ է զարգացնել «էկոլոգիական քաղաքագիտություն» գիտաճյուղը հայրենական գիտության մեջ, ավելացնել հետազոտություններն այս ուղղությամբ:

4. Էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրը հաճախ հանդիսանում է ոչ միայն ուժային և ոչ ուժային բնույթի հակամարտությունների պատճառ (բնական ռեսուրսների համար պայքար ու գերակա դիրքի նվաճում և այլն), այլև հետևանք, որը զգալի, երբեմն՝ անդառնալի հետք է թողնում էկոհամակարգերի և, ընդհանուր առմամբ, բնության վրա:

5. Էկոլոգիական անվտանգության ապահովմանն ուղղված արդյունավետ քաղաքականության լիարժեք իրագործման խաթարման կարևոր պատճառ է հանդիսանում աշխարհի մի շարք պետություններում՝ էկոլոգիական խնդիրներին ու իրողություններին համարժեք արձագանքելու և լուծում տալու նպատակով քաղաքական կամքի բացակայությունը կամ պակասը, օրենսդրական բազայի որոշակի անկատարությունը կամ իրավական միջոցների ընտրողական կիրառումը:

6. Ներկայումս էական նշանակություն ունի հասարակություններում էկոլոգիական գիտակցության և էկոլոգիական մշակույթի ձևավորման անհրաժեշտությունը՝ դիտարկելով հարցը ոչ միայն բնության նկատմամբ հոգածության դրսևորման, այլև բարեկամեցողության, հանդուրժողականության, հոգատարության որակների ձևավորման, մարդ-մարդ և մարդ-հասարակություն հարա-

բերությունների առողջացման ու ներդաշնակեցման առումներով: Էկոլոգիական գիտակցության և էկոլոգիական մշակույթի ձևավորումը հասարակության մեջ կայուն զարգացմանն անցնելու անհրաժեշտ, անգամ պարտադիր պայման է, ինչը կբերի հասարակությունների զարգացման այնպիսի փոփոխությունների, որոնք հնարավորություն կտան թեթևացնելու բնական միջավայրի վրա մարդածին (անթրոպոգեն) գործունեության հետևանքները: Պետության կողմից իրականացվող էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը էկոլոգիական գիտակցության և մշակույթի ձևավորման առանցքային և ռազմավարական նշանակության բանալին են, որոնց միջոցով հնարավոր է հասնել համակեցության և կենցաղավարության հարցերում այն ներդաշնակ վիճակին, երբ բնության պահպանությունը դառնում է կենսաձև, կենսակերպ, իսկ էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի գիտակցումն ու իմաստավորումը՝ բարձր բանական դրսևորում: Այս համատեքստում սույն ատենախոսությունը համեստ փորձ է նաև նպաստելու հայ հասարակության մեջ էկոլոգիական գիտակցության մակարդակի բարձրացմանը՝ էկոլոգիական անվտանգության հարցերը իմաստավորելով ու դիտարկելով ավելի լայն սպեկտրով, համակողմանիորեն և քաղաքագիտական խորքով:

7. Ներկայումս էկոլոգիական անվտանգության բազմաթիվ հարցեր հաճախ ունեն միջազգային անվտանգության տարածաշրջանային և անգամ համամոլորակային ընդգրկում՝ ներառելով պետություններ կամ դաշինքներ: Այդ խնդիրներն ազդում են միջազգային քաղաքականության, քաղաքական գործընթացների վրա: Այս համատեքստում անհրաժեշտություն է առաջանում վերանայելու պետությունների ազգային անվտանգության ռազմավարությունները (այդ թվում՝ ՀՀ-ի), էկոլոգիական քաղաքականությունը՝ առավել անվտանգ և ապահով պետություն ու մոլորակ ունենալու նպատակով:

8. Էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի նկատմամբ ներկայումս փոխվել են միջազգային հանրության ընկալումները, մոտեցումներն ու տրամադրությունները: Մեծ և փոքր էկոլոգիական հանցագործություններն այսօր չեն դիտարկվում զուտ ռազմական գործողություններին ուղեկցող օրինաչափ երևույթներ ու հետևանքներ, այլ ստանում են առավել սուր, կտրուկ, հուզազգացմունքային ու բարոյական գնահատականներ, քանի որ փոխվել է ընկալումը Երկիր մոլորակի առանց այդ էլ սակավ պաշարների ու հնարավորությունների նկատմամբ, և այսօր մոլորակի խնդիրներին վերաբերող ցանկացած հարց ստանում է շատ ավելի զգայուն ու սուր արձագանք, քան տարիներ առաջ: Ավանդական մոտեցումներն ու էկոլոգիական անվտանգության ապահովման գործող մեխանիզմները հաճախ իրենց տեղը զիջում են նոր մոտեցումներին ու հայացքներին, ստիպում նորովի իմաստավորել առկա մոտեցումները, քանի որ էկոլոգիական անվտանգության խաթարումն այսօր դիտվում է ոչ միայն որպես ընդհանուր անվտանգության համակարգի վտանգում, այլև մարդկության դեմ

ուղղված միտումնավոր գործողություն՝ իր բոլոր հետևանքներով: Պատերազմի ժամանակ միտումնավոր բնաոչնչացումը առաջադեմ աշխարհում բնութագրվում է որպես համամարդկային սեփականություն ու արժեք ներկայացնող բնության հանդեպ գործած լրջագույն հանցանք: Որքան սրանում են էկոլոգիական հարցերն, այնքան փոխվում է մարդկանց գիտակցությունը, և ներքին ահազանգը սկսվում է հստակորեն արտահայտվել ու դրսևորվել հասարակական-քաղաքական գործընթացներում, հասարակությունների ու անհատների տրամադրություններում, երիտասարդության շրջանում և այլն:

9. Ժամանակակից պատերազմներում և զինված հակամարտություններում ընդդիմապայքարող կողմերի համար միմյանց բնահամակարգերի միտումնավոր վնասումը կամ ոչնչացումը (էկոցիդը) դարձել է պատերազմավարության արդի ձևերից և եղանակներից մեկը, ժամանակակից պատերազմների ուրույն և նպատակային կերպով կիրառելի բաղադրիչ: Հաճախ հենց հակառակորդի բնահամակարգի ոչնչացումն է դիտվում որպես ռազմավարական կամ օպերատիվ-մարտավարական նշանակության նպատակ, որի իրականացման համար առաջադրվում են մարտական խնդիրներ: Այս համատեքստում անհրաժեշտություն է առաջանում էկոցիդը դիտարկել ու գնահատել նաև ռազմական ռազմավարության համատեքստում:

10. Էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրներին միջազգային հանրության կողմից մեծացող ուշադրությունը հանգեցրել է բնաոչնչացման (էկոցիդի) միջազգայնորեն դատապարտման և այն որպես քրեորեն պատժելի ռազմական հանցագործություն դիտարկելու միջազգային, քաղաքական, սոցիալական գործընթացների լայն թափով մեկնարկի, որն ունի հետագա զարգացման միտում:

11. Թեև Հայաստանը հարուստ չէ բնական պաշարներով, սակայն եղածի նկատմամբ էլ նկատվում է հոգածության զգալի պակաս, իսկ բնության նկատմամբ անխնա վերաբերմունքը շատ հաճախ կրում է միտումնավոր բնույթ՝ երբեմն հետապնդելով անձնական շահ: ՀՀ Կառավարության կողմից անհրաժեշտ է համակարգված, նպատակաուղղված և հետևողական քայլերի ձեռնարկում, էկոլոգիական արդյունավետ քաղաքականության մշակում և իրականացում՝ շրջակա միջավայրի պահպանության, կենսաբազմազանության ապահովման, ՀՀ ազգային անվտանգության համակարգի օրգանական միասնության պահպանման և ՀՀ կայուն զարգացման նպատակով:

12. Էկոլոգիական անվտանգության խնդիրները շարունակելու են մնալ Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների տիրույթում՝ անկախ Արցախյան 44-օրյա պատերազմի հետևանքներից և Ղարաբաղյան հիմնախնդրի ընթացքից ու հետագա զարգացումներից: Դրանք չեն վերանա, եթե անգամ Հայաստանի և Ադրբեջանի միջև փորձ արվի ապահովել խաղաղ գոյակցություն՝ խաղաղության պայմանագրի կնքմամբ, Հայաստանի կողմից Ադրբեջանի տարածքային

ամբողջականության և Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմում ճանաչմամբ (ինչը էապես կնվազեցնի Ադրբեջանի կողմից Արցախում իրականացված բնաոչնչացման դատապարտման ՀՀ-ի իրավական հնարավորությունները) և այլն: Ադրբեջանը չի հրաժարվի էկոլոգիական բնույթի նոր մեղադրանքներից և ագրեսիայից ՀՀ-ի դեմ՝ կիրառելով հիբրիդային պատերազմավարության ամբողջ գործիքակազմն՝ ինչպես խաղաղ ժամանակ, այնպես էլ իր կողմից հնարավոր նոր պատերազմի սանձազերծման պարագայում:

13. ՀՀ Կառավարության՝ Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը վավերացնելու ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից համապատասխան հաստատումը և վավերացման գործընթացը զգալի նշանակություն կունենան ոչ այնքան ներկայումս հետպատերազմյան իրողությունների գնահատման, որքան ապագայում Ադրբեջանի գործած հնարավոր նոր էկոցիդը կանխելու, այն որպես ռազմական հանցագործություն ճանաչելու և համապատասխան մեղադրանքով ՄՔԴ դիմելու առումով: Այսինքն, ՀՀ ԱԺ կողմից ՄՔԴ կանոնադրությունը վավերացնելով՝ ՀՀ-ն մասնակից կդառնա ՄՔԴ կանոնադրությանը (ինչը լրացուցիչ և համոզիչ կերպով կհաստատի սույն ատենախոսության մեջ առաջ քաշված պնդումը, որ առկա է էկոցիդի փաստը՝ որպես ռազմական հանցագործություն դիտարկելու անհրաժեշտ իրավական հիմքերի հնարավորությունը՝ Ադրբեջանին ներկայումս և հետագայում պատասխանատվության ենթարկելու նպատակով:

14. Հայաստանը, որը մաս է միջազգային անվտանգության համակարգի, չի կարող անմասն մնալ էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի վերաբերյալ միջազգային քաղաքական, հասարակական, իրավական, տեղեկատվական գործընթացներից: Ավելին, առկա իրավիճակը խելամտորեն օգտագործելու պարագայում մեր պետությունը կարող է շահեկան դիրք զբաղեցնել ինչպես Ղարաբաղյան հակամարտության վերջնական կարգավորման գործընթացում, այնպես էլ միջազգային անվտանգության չափումով, քանի որ, բացի խաղաղապական գործունեությունից, ՀՀ-ն կարող է ներկայանալ նաև որպես էկոլոգիական խնդիրներով մտահոգ և բնապահպանական ակտիվ գործունեություն ծավալող, էկոլոգիական դիմագիծ ունեցող պետություն: Այս հանգամանքը ազդեցիկ տպավորություն կթողնի արդի աշխարհում, ուր էկոլոգիական խնդիրների բարձրաձայնումը, կենդանասերների, առհասարակ՝ բնասերների ու բնապահպանների հսկա համաշխարհային ցանցի գործունեությունը երբեմն շատ ավելի մեծ ու գործուն արդյունք է տալիս:

Ելնելով միջազգային, տարածաշրջանային և ազգային չափումներում էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի ռազմավարական ու քաղաքագիտական հետազոտության և վերլուծության արդյունքներից, հաշվի առնելով ատենախոսության աշխատանքի արդյունքում արված վերոնշյալ հիմնական եզրակացությունները՝ ստորև ներկայացվում են մի շարք **առաջարկություններ**՝

• Էկոլոգիական անվտանգության թեմաներով աշխատություններում կամ դասագրքերում «էկոլոգիական անվտանգության» սահմանման մեջ անհատի, հասարակության և պետության անվտանգության ու կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածության վիճակի մասին հատվածում ավելացնել «բնություն» տարրը՝ շարադրելով հետևյալ կերպ. «Էկոլոգիական անվտանգությունը դիտվում է որպես անհատի, հասարակության, պետության և բնության կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածության վիճակ իրական և հնարավոր սպառնալիքներից, որոնք գոյանում են շրջակա միջավայրի վրա անթրոպոգեն, կամ բնական ազդեցության հետևանքով»:

• Գիտական շրջանառության մեջ մտցնել «էկոլոգիա» գիտաճյուղի ընդլայնումն ու զարգացումը և էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի համընդգրկունությունն արտացոլող մի շարք նոր հասկացություններ ու տերմիններ, այդ թվում՝ սույն ատենախոսության մեջ առաջ քաշված «Սոցիալացանցային էկոլոգիա» (անգլ.՝ “Social Network Ecology”, ռուս.՝ “Социально-сетевая экология”) և «Սոցիալացանցային էկոլոգիական անվտանգություն» (անգլ.՝ “Social Network Ecological Security”, ռուս.՝ “Социально-сетевая экологическая безопасность”) տերմինները:

• Ադրբեջանի կողմից տարածաշրջանի էկոհամակարգերի վտանգման փաստը դարձնել հայկական կողմի համար նոր և արդյունավետ քաղաքական գործիք՝ միջազգային կառույցների կողմից Ղարաբաղյան հիմնախնդրում հայանպաստ դիրքորոշումների հասնելու և բանակցային գործընթացում Ադրբեջանի հանդեպ ՀՀ բարենպաստ դիրք ապահովելու առումով:

• Ադրբեջանի կողմից տարածաշրջանի էկոհամակարգերի վտանգումը բանակցային գործընթացում բարձրաձայնել ոչ միայն Հայաստանի և Արցախի անվտանգային շահերի, այլև Հարավկովկասյան տարածաշրջանի էնդեմիկ, բացառիկ և հազվագյուտ կենսաբազմազանության վտանգման համատեքստում:

• Մշակել փաստարկված և իրավական ուժ ունեցող ծրագիր՝ Ադրբեջանին էկոցիդ իրականացնելու մեջ միջազգայնորեն մեղադրելու, դատապարտելու և իրավական պատասխանատվության ենթարկելու նպատակով, անկախ էկոցիդի վերաբերյալ ընթացիկ գործընթացի հնարավոր բոլոր զարգացումներից ու ելքերից՝ Ադրբեջանի կողմից հնարավոր նոր ագրեսիայի դեպքում այդ ծրագիրը իրագործելի դարձնելով ինչպես Հաագայի միջազգային դատարանում, այնպես էլ ՄԱԿ-ի, ԵԽԽՎ-ի, ԱՊՀ-ի համապատասխան ատյաններում և մարդու իրավունքների պաշտպանության միջազային կառույցներում (հումանիտար աղետի, տեղի բնակչության կյանքի, կենսական իրավունքների խախտման առումներով):

• ՀՀ արտաքին քաղաքական մակարդակում զարգացնել ու շրջանառության մեջ դնել Հարավհովկասյան էկոհամակարգի մաս կազմող Արցախի էնդեմիկ կենսաբազմազանության ապահովման և պահպանման նպատակով Արցախին ու հարակից շրջաններին միջազգային մակարդակով հատուկ

պահպանվող տարածքի կարգավիճակի տրամադրման ու ամրագրման գաղափարը:

- Վերանայել ու կատարելագործել ՀՀ և Արցախի Հանրապետության բնապահպանական օրենսդրությունը, ռազմավարական նշանակության փաստաթղթերը՝ համապատասխանեցնելով դրանք էկոլոգիական արդի մարտահրավերներին և միջազգային գործընթացներին:
- ՀՀ Քրեական օրենսգրքի 394-րդ հոդվածում ավելացնել դրույթ հակառակորդի՝ բնաոչնչացմանն ուղղված գործողության մասին՝ ավելի ամրապնդելով ՀՀ դիրքերը որոշ վտանգավոր քիմիական տարրեր (մասնավորապես՝ սպիտակ ֆոսֆոր) պարունակող զենքերի կիրառումը միջազգայնորեն արգելելու հարցում, ինչն էլ ավելի կամրապնդի ՀՀ դիրքերը էկոցիդի միջազգային ճանաչման հարցում՝ հողում անելով սեփական օրենսդրությանը:
- Էկոլոգիական անվտանգության բաղադրիչը պետական քաղաքականության մեջ ընդգծել ու կարևորել՝ որպես անվտանգային միջավայրի լիարժեք կայացման, անվտանգության ճարտարապետության ճիշտ կառուցման ու օպտիմալ կառավարման մշակույթի ձևավորման և զարգացման խիստ կարևոր գործոն՝ պետական միջոցառումներով նպաստելով հասարակության էկոլոգիական գիտակցության և մշակույթի մակարդակի բարձրացմանը:
- Հայրենական հեռուստա- և ռադիոեթերում ու համացանցում մշակել զարգացնել ու լայնորեն տարածել բնաճանաչողական և բնապահպանական բովանդակությամբ մեդիաարտադրանք՝ հայրենի բնության նկատմամբ հոգածության, պատշաճ վերաբերմունքի ձևավորման, էկոլոգիական խնդիրների հանրահռչակման, էկոլոգիական գիտակցության և մշակույթի ձևավորման, բնակչության բնապահպանական իրազեկության ու կրթվածության ապահովման և մակարդակի բարձրացման նպատակով:

Պետական ուշադրություն, հոգածություն և աջակցություն ցուցաբերել բնապահպանների, էկոլոգիական խնդիրներով զբաղվող պետական և ոչ պետական կառույցների, ՀԿ-ների, հիմնադրամների, բնապահպանական կազմակերպությունների և քաղաքացիական բնապահպան ակտիվիստների, ԶԼՄ-ների, բլոգերների, սոցիալական մեդիայի անհատների նկատմամբ, արվեստի և գրականության գործիչների, առանձին ստեղծագործողների, նկատմամբ: Մշակել նրանց խրախուսման և շարժառիթավորման պետական մեխանիզմներ: Նրանց միջոցով բնապահպանական հարթակներում և ֆորումներում վեր հանել ու հանրայնացնել Հայաստանի և Արցախի էկոլոգիական անվտանգային խնդիրները՝ Ադրբեջանի կողմից վարվող էկոլոգիական վնասաբեր գործունեության քննադատությամբ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ գիտական հոդվածներում՝

1. Շահվերդյան Ա. Մ., «Պատերազմի կործանարար ազդեցությունը բնության վրա: Հակառակորդի բնահամակարգը՝ որպես պատերազմի թիրախ»: ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, № 4, 2010, էջեր 103-112:
2. Շահվերդյան Ա. Մ., «Բնապահպանական անվտանգության որոշ հարցերի դիտարկումը քաղաքական գիտության տեսանկյունից»: ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, № 2, 2010, էջեր 79-92:
3. Շահվերդյան Ա. Մ., ««Սոցիալացանցային էկոլոգիա» հասկացությունը՝ որպես անվտանգային հետազոտությունների նոր ոլորտ»: ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, № 1-2, 2018, էջեր 221-231:
4. Շահվերդյան Ա. Մ., «Ժամանակակից պատերազմների բնույթը. ՀՀ Զինված ուժերի ուղղությունները՝ ժամանակակից պատերազմների բնույթի հաշվառմամբ»: ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, № 3, 2019, էջեր 109-119:
5. Շահվերդյան Ա. Մ., «Տեղեկատվական-քարոզչական պատերազմի էկոլոգիական չափումները Ղարաբաղյան հակամարտության համատեքստում»: «Գիտական Արցախ» պարբերական, № 4, 2020, էջեր 45-51:
6. Շահվերդյան Ա. Մ., «Մոլորակի բնական պաշարների նվազման հետևանքները միջպետական հարաբերություններում»: «Регион и мир» научно-аналитический журнал, том XI, № 5, 2020, էջեր 30-34:
7. Շահվերդյան Ա. Մ., «Բնահամակարգերի ոչնչացման մեջ մեղադրանքների օգտագործումը քաղաքական շահարկումների նպատակով՝ Ղարաբաղյան հակամարտության օրինակով»: ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, № 1, 2020, էջեր 81-88:
8. Շահվերդյան Ա. Մ., «Արտաքին քաղաքականության ձևավորման որոշ հարցեր՝ 44-օրյա պատերազմի ժամանակ Արցախում կատարված բնաոչնչացման դատապարտման օրինակով»: ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, № 1, 2022, էջեր 104-115:
9. Շահվերդյան Ա. Մ., Քամալյան Ա. Ա., «Էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի կարևորումը Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության ռազմավարական նշանակության փաստաթղթերում», Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր (հասարակական գիտություններ), № 1, 2023, էջեր 205-221:

ШАХВЕРДЯН АРЛЕН МАИСОВИЧ

ПРОБЛЕМА ЭКОЛОГИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ В КОНТЕКСТЕ СТРАТЕГИЧЕСКОЙ ОЦЕНКИ (НА ПРИМЕРЕ РА)

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02 – “Политические институты и процессы”
Защита состоится 19 декабря 2023 г., в 12:00 часов на заседании действующего в ЕГУ РА специализированного совета 056 “Политология и международные отношения” ВАК РА.
(Адрес: РА, Ереван 0025, ул. Алека Манукяна 1)

РЕЗЮМЕ

Актуальность темы диссертации: В современных международных и межгосударственных отношениях, в политических процессах проблема экологической безопасности оказывает существенное влияние, нередко являясь поводом для пересмотра политических отношений и возникновения внутриполитической напряженности, поводом для целенаправленных спекуляций политического характера, причиной пересмотра международных документов и обязательств, а также фактором, оказывающим определенное влияние на принятие политических решений.

Рассмотрение проблемы экологической безопасности на стратегическом уровне дает возможность оценить ее глубже, в национальном и международном измерениях, путем анализа политических процессов, происходящих в мире, с использованием широкого набора инструментов. Сегодня многие вопросы экологической безопасности вышли за рамки ответственности и международных обязательств отдельно взятого государства или государств, нередко приобретая глобальный масштаб и значение. Не менее важны вопросы экологической безопасности, возникающие в конфликтных зонах как следствие или причина конфликтов. Более того, в современных войнах умышленное повреждение природной среды противника (экоцида) стало одной из современных характеристик ведения войны. На протяжении десятков лет Армения и Арцах подвергались различным обвинениям и политическим спекуляциям экологического содержания со стороны вражеского государства и терпели от него ущерб экологического характера. Тема диссертации особенно актуальна в этом контексте, рассматривая вопрос экологической безопасности в контексте обеспечения интересов безопасности РА и оценивая экологические проблемы и их последствия в Арцахской 44-дневной войне.

Целью данной диссертационной работы выделение значимости проблемы экологической безопасности и подчеркивание ее важности с точки зрения политической науки, во внутригосударственных и межгосударственных политико-безопасных процессах и современных войнах, наблюдая за результатами международных процессов осуждения преднамеренного разрушения природной системы как переговорного инструмента, обеспечивающего превосходство над противником в процессе урегулирования Карабахского конфликта и как нового эффективного проармянского стратегического направления.

Диссертация состоит из введения, двух глав, заключения, рекомендаций и списка использованной литературы.

В первой главе – **"Проблема экологической безопасности в контексте безопасностных и политологических развитий"** – описаны содержательные расширения, новое значение и оценка экологии и понятия "экологическая безопасность" как важной составляющей национальной безопасности в контексте актуальных экологических проблем. Анализируются особенности, преимущества и новые исследовательские возможности наблюдения и оценки проблемы экологической безопасности с точки зрения политологии, подчеркивая необходимость развития экологической политологии как современного, важного и актуального направления в отечественной науке. Проблема экологической безопасности представлена во внешнеполитической и внутриполитической сферах, в контексте переосмысления или изменения политики, проводимой государствами. Представлены разрушительные последствия войны для экосистем и нацеливание на экосистему противника во время войны.

Во второй главе – **"Проблема экологической безопасности в контексте Карабахского конфликта и армяно-азербайджанских отношений"** – рассмотрено влияние и значение ряда экологических проблем в ходе Карабахского конфликта, а также преднамеренное использование их противником в качестве предмета политических спекуляций. Исследован, анализирован и представлен современный международный процесс осуждения явления преднамеренного разрушения экосистем во время войн, признания его уголовным преступлением и возможность занятия в этом контексте выгодных для армянской стороны позиций, значение процесса и его возможное влияние на Карабахское урегулирование и интересы безопасности РА. Подчеркнуты возможности, которые могут быть предоставлены РА, чтобы более выгодно позиционировать себя с точки зрения настоящего и возможного будущего развития армяно-азербайджанских отношений.

ARLEN MAYIS SHAHVERDYAN

THE PROBLEM OF ENVIRONMENTAL SECURITY IN THE CONTEXT OF STRATEGIC ASSESSMENT (ON THE EXAMPLE OF THE RA)

Dissertation under 23.00.02 – "Political Institutions and Processes" aspiring to earn PhD in Political Science.
The public defense will take place on December 19, 2023, at: 12:00 PM, at the Yerevan State University, at 056 "Political Science and International Relations" RA HAC Specialized Chamber Session
(Address A. Manukyan str. 1, Yerevan 0025, Repiblic of Armenia).

The relevance of the dissertation topic: In modern international and interstate relations, in political processes, the problem of environmental security has a significant impact, often being a reason for revising political relations and the emergence of domestic political tension, a reason for targeted political speculations, a reason for revising international documents and obligations, as well as a factor having a certain influence on political decision-making.

Consideration of the problem of environmental security at the strategic level makes it possible to assess it more deeply, in the national and international dimensions, by analyzing the political processes taking place in the world, using a wide range of tools. Today, many issues of environmental security have gone beyond the responsibility and international obligations of a single state or states, often acquiring a global scale and significance. Equally important are the issues of environmental security that arise in conflict zones as a consequence or cause of conflicts. Moreover, in modern warfare, deliberate damage to the natural environment of the enemy (ecocide) has become one of the modern characteristics of warfare. For decades, Armenia and Artsakh have been subjected to various accusations and political speculations of environmental content by the enemy state and suffered environmental damage from it. The topic of the dissertation is especially relevant in this context, considering the issue of environmental security in the context of ensuring the security interests of the RA and assessing environmental problems and their consequences in the Artsakh 44-day war.

The aim of the dissertation is to highlight the importance of the problem of environmental security and emphasize its importance from the point of view of political science, in intrastate and interstate political security processes and modern warfare, observing the results of international processes of condemning the deliberate destruction of the natural system as a negotiating tool that provides

superiority over the enemy in process of settlement of the Karabakh conflict and as a new effective pro-Armenian strategic direction.

The dissertation consists of introduction, two chapters, conclusion, recommendations and bibliography.

The first chapter, entitled **"The problem of environmental security in the context of security and political science developments"**, describes the content extensions, new meaning and assessment of ecology and the concept of "environmental security" as an important component of national security in the context of current environmental problems. The features, advantages and new research opportunities for monitoring and evaluating the problem of environmental security from the point of view of political science are analyzed, emphasizing the need to develop environmental political science as a modern, important and relevant area in domestic science. The problem of environmental security is presented in the foreign and domestic political spheres, in the context of rethinking or changing the policies pursued by states. The devastating effects of war on ecosystems and the targeting of an enemy ecosystem during war are presented.

The second chapter, entitled **"The problem of environmental security in the context of the Karabakh conflict and Armenian-Azerbaijani relations"**, examines the impact and significance of a number of environmental problems in the course of the Karabakh conflict, as well as their deliberate use by the enemy as a subject of political speculations. The modern international process of condemning the phenomenon of deliberate destruction of ecosystems during wars, recognizing it as a criminal offense and the possibility of taking positions advantageous for the Armenian side in this context, the significance of the process and its possible impact on the Karabakh settlement and the security interests of the Republic of Armenia have been researched, analyzed and presented in this chapter. The opportunities that can be provided to the RA in order to position itself more favorably from the point of view of the present and possible future development of Armenian-Azerbaijani relations are emphasized.